բարձրաստիճան անձինք։ Սրբազանը մի հայերէն քարոզ կարդաց և դրա տպագիր թարգմանութիւնը բոլոր հանդիսականներին բաժանուեցաւ. և այդ քարոզի երկու փառակոչմամ օրի նակները մատուցուեցան Պոտեմկին իշխանի ձեռքով Կայսրուհուն և Մեծ Իշխանին։ Կայսրուհին փետրուարի 23 մի հոյակապ պանագիա և ականակուռ խաչ առաքեց սրբազանին 'ի նշան իւր բարեհաճութեան դէպի նա. իսկ մայիսի 3-ին սրբազանն արժանացաւ ներկայանալ Կայսրուհուն և մատուցանել նրան արքայական տան համար յօրինուած մաղթանքի տետրը, որի հեղինակը, ինչպէս արդէն ասած ենք, հանգուցեալ Սիմէոն կաթողիկոսն էր։

Մոսկվայի եկեղեցու օծումից յետոյ Յովսէփ արքեպիսկոպոսը մտադիր էր Աժտարխան վերադառնալ, սակայն Պոտեմկին իշխանի փափագին զիջանելով ստիպուած էր փոխել իւր միտքը։

Պոտեմկին իշխանն երկրորդ տաճկական պատերազմի նախապատրաստութիւններն աչքի առջև ունենալով, կամենում էր, որ սրբազանը նրա հետ Ղրիմ գնայ և տպա պատերազմում ուղեկցէ նրան։ Սրբազանի մտերմութիւնն իշխանի հետ, Նրա ծանօթութիւնն արևելեան երկիրների և դրանց բարքերի ու լեզուների հետ և մանաւանդ ազդեցութիւնը թիւրքական նահանգներում բնակուող Հայերի վրայ շատ օգտակար էին տանում նրա գանուիլն իշխանի մօտ։ Յովսէփ արքեպիսկոպոսը, որի վրանը Պոտեմկին իշխանի վրանին կից էր, ժիր կերպով մասնակցում էր պատերազմական գործերի ընթացքին. իշխանի յանձնարարութեամբ նա մի քանի անգամ գնաց Մոլդաւիայի, Վալախիայի և Բուկովինայի հայաբնակ քաղաքներն և իւրաքանչիւր քաղաքի նուաճումից յետոյ նոյն իշխանի պատուէրով դուրս էր բերում հայերին և բնակեցնում Դուբոսարի մօտերքը, ուր այդպիսով մի նոր քաղաք առաջ եկաւ, որ Հայաստանեայց Լուսաւորչի անուամբ Գրիգորոպոլիս կոչեցին։ Այս անգամ էլ ռուսաց կառավարութիւնը մի առանձին խնամք ցոյց տուաւ Հայ գաղթականներին. արքունի գանձարանից միջոցներ տրուեցան մի մայր տաճար, մի վանք, երկու ծխական եկեղեցի, մի առաջնորդարան և մի հոգևոր տեսան կառուցանելու համար, որին կից մատադիր էին հիմնել մի գիմնազիա։ արքունի գանձարանը յանձն առաւ նմանապէս շինել քաղաքային խորհրդարան, արհեստաւորների խանութներ, ջրանցք և այլն,

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան